ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 – 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«07» 10 2025թ.
No 011972

«ԳՈՌՀԱԿ ԹՐԵՅԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ՀԱԿՈԲ ԿԱՐԱՔԵՀՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Մանուկյան փ., շ 8, բն. 7
էլ. փոստի հասցե՝ etalon.supermarket@gmail.com)

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ապրանքի գնի ներկայացման՝ «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված կանոնների խախտման հատկանիշների առերևույթ առկայության վերաբերյալ

Հարգելի՛ պարոն Կարաքեհյան,

«Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ **Օրենք**) 26.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *սպառողների շահերը խախտող գործելակերպ են համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած վարքագիծ, գործողություն կամ անգործություն, որոնք ազդում են կամ կարող են ազդել անորոշ շրջանակով սպառողների կամ սպառողների խմբի շահերի վրա և հակասում են սույն օրենքին, այլ օրենքների, այլ նորմատիվ իրավական ակտերի կամ գործարար շրջանառության սովորույթներին կամ խախտում են սպառողների նկատմամբ բարեխղճության, ազնվության, արդարության, ճշմարտության կամ անաչառության սկզբունքները*:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *սպառողների շահերը խախտող գործելակերպն արգելվում է*:

Նույն հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ *սպառողների շահերը խախտող*

գործելակերպ են համարվում սույն հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող ցանկացած վարքագիծ, գործողություն կամ անգործություն, այդ թվում՝ «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված՝ ապրանքի գնի ներկայացման կանոնների խախտումը:

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 9.7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *ապրանքը վաճառքի ցուցադրելիս պետք է ներկայացվեն յուրաքանչյուր ապրանքի անվանումը, վաճառքի գինը և միավոր գինը:*

Տեղեկացնում ենք, որ Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ **Հանձնաժողով**) սպառողների շահերի պաշտպանության վարչությունում առկա տեղեկատվության համաձայն՝ «Գոռհակ Թրեյդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող առևտրի օբյեկտում առկա է ապրանքի գնի ներկայացման կանոնների առերևույթ խախտում, մասնավորապես՝ մի շարք ապրանքներ վաճառքի ցուցադրելիս ներկայացված չեն եղել դրանց միավոր գները:

Օրենքի 91.3-րդ հոդվածի համաձայն՝

4. Իրավախախտում կատարելու փաստն ընդունելու դեպքում տնտեսավարող սուբյեկտը ծանուցումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, Հանձնաժողով է ներկայացնում խախտումը դադարեցրած լինելու և հիսուն հազար դրամ վճարած լինելու վերաբերյալ տեղեկատվություն: Գրավոր ծանուցումն առաջին անգամ ուղարկվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի կողմից հիսուն հազար դրամ վճարելու պահանջը չի կիրառվում:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված գործողությունները կատարվելու դեպքում համապատասխան տեղեկատվությունը Հանձնաժողով ներկայացվելու հաջորդող օրվանից գրավոր ծանուցումն ստանում է ուժի մեջ մտած վարչական ակտի ուժ, իսկ տնտեսավարող սուբյեկտը չի կարող հետագայում հերքել իր կողմից իրավախախտում կատարվելու փաստը:

6. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված գործողությունները չկատարվելու դեպքում Հանձնաժողովը կարող է հարուցել սպառողների շահերի դեմ ուղղված իրավախախտման վերաբերյալ վարույթ:

Հիմք ընդունելով վերոնշյալը և ղեկավարվելով Օրենքի 91.3-րդ հոդվածով՝ անհրաժեշտ է ***ապրանքները վաճառքի ցուցադրելիս ապահովել «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված գնանշման պահանջները և երկշաբաթյա ժամկետում այդ մասին Հանձնաժողովին ներկայացնել տեղեկատվություն:***

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ**

Կատարող՝ Արմենուհի Թադևոսյան
Սպառողների շահերի պաշտպանության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (245)

www.competition.am կայքում հրապարակման օրը՝ 12 նոյեմբերի 2025 թվական: